

Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2021-2022 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է առաջին անգամ հիշատակվում Հայասա երկիրը. 0,5 մ.
 ա/ Ք.ա. XIV դ. բ/ Ք.ա. XV դ. սկզբում
 գ/ Ք.ա. XIII դ. սկզբում դ/ Ք.ա. XII դ.
2. Որքա՞ն գինվոր էր ներառված Վանի թագավորության բանակի յուրաքանչյուր վաշտում. 0,5 մ.
 ա/ 100 բ/ 40
 գ/ 50 դ/ 75
3. Ե՞րբ է Պարթևստանում գահ բարձրացել Գողերձ II-ը. 0,5 մ.
 ա/ Ք.ա. 89 թ. բ/ Ք.ա. 88 թ.
 գ/ Ք.ա. 87 թ. դ/ Ք.ա. 92 թ.
4. Որքա՞ն էր Տիգրանակերտ մայրաքաղաքի բնակչությունը դրա հիմնադրումից կարճ ժամանակ անց. 0,5 մ.
 ա/ 100 հազար բ/ 120 հազար
 գ/ 300 հազար դ/ 150 հազար
5. Կիլիկիայի ո՞ր քաղաքում է Վաղես կայսրը փորձել կազմակերպել Պապի սպանությունը. 0,5 մ.
 ա/ Ադանա բ/ Մամեստիա
 գ/ Սիս դ/ Տարսոն
6. Ո՞ր քաղաքն են Զաքարյաններն ազատագրել 1203 թ. 0,5 մ.
 ա/ Կարս բ/ Դվին
 գ/ Անի դ/ Խլաթ
7. 1830 թ. որտե՞ղ են վերաբնակեցվել կարսեցիները. 0,5 մ.
 ա/ Փամբակ բ/ Ապարան
 գ/ Շիրակ դ/ Ախալցխա
8. Ե՞րբ է կնքվել Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագիրը. 0,5 մ.
 ա/ 1724 թ. հունիսին բ/ 1724 թ. սեպտեմբերին
 գ/ 1725 թ. մարտին դ/ 1722 թ. սեպտեմբերին
9. Քանի՞ գավառների է բաժանել երկիրը Արտաշես I-ը: 0,5 մ.
10. Ե՞րբ է Տիգրան II-ը կարողացել գրավել Պտղոմայիս քաղաքը: 0,5 մ.
11. Ո՞վ է 1830 թ. նշանակվել Հայկական մարզի կառավարիչ: 0,5 մ.
12. Որքա՞ն է Կապուտջուղ լեռնագագաթի բարձրությունը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
 ա/ Սարգոն II-ի արշավանքը Վանի թագավորության դեմ
 բ/ Արգիշտի I-ի արշավանքը Դիաուխի երկիր
 գ/ Սարգուրի III-ի հիշատակումը ասորեստանյան արձանագրություններում
 դ/ Կիմերների ասպատակիչ արշավանքը Վանի թագավորություն
 ե/ Արդինի-Մուասսիր երկրի ներառումը Վանի թագավորության կազմում
 գ/ Ասորեստանի Սենեքերիմ թագավորի սպանությունը իր որդիների կողմից
 է/ Սարգուրի II-ի գահակալության սկիզբը
 ը/ Ասորեստանի շրջափակումը երեք կողմից Արգիշտի I-ի ջանքերով
 թ/ Սկյութների ռազմական գործողություններն ընդդեմ Ուրարտուի

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

- | | | |
|--------------------|-----------------|-------------|
| 1. Վոնոն Արշակունի | 2. Արտավազ IV | 3. Ջենոն |
| 4. Արշակ I | 5. Արիոբարզանես | 6. Էրատո |
| ա. 34-35 թթ. | բ. 2-4 թթ. | գ. 6-12 թթ. |
| դ. 18-34 թթ. | ե. 12-16 թթ. | զ. 4-6 թթ. |

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Ճորոխն ունի 354 կմ երկարություն:
 բ/ Հայերի ծագման մասին վրացական ավանդությունը գրի է առնվել X-XII դդ.:
 գ/ Արատտայի արքան միաժամանակ երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան էր:
 դ/ Չավնդուրի ճակատամարտը տեղի է ունեցել 1723 թ.:
 ե/ Մադրասի տպարանը հիմնադրվել է 1772 թ.:
 զ/ 689 թ. Հայաստան է ներխուժել պարսկական զորքը:
 է/ Միրիոկեֆալոնի ճակատամարտից (1176 թ.) հետո Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել է Կիլիկիայից:
 ը/ Հայոց կաթողիկոսությունը Սսում գտնվել է 1151-1292 թթ.:
 թ/ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը կազմվել է 1184 թ.:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

- ա/ XV դարում Հայաստանը նվաճած թուրքմենական ցեղերը կոչվում էին սելջուկ-թյուրքեր:
 բ/ «Հեթանոս» բառը հունարեն «էթնոս» բառից է:
 գ/ Ավատատիրության խորացմամբ թագավորական կամ պետական հողերը ընդլայնվում էին, ծառայող ազնվականության հողատարածքները նվազում:
 դ/ Բուն հելլենիստական ժամանակաշրջանը հելլենիզմի պատմության՝ մեր թվարկության I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանն է:
 ե/ Արաբական խալիֆայությունում «Ջազիրա» նահանգը Հյուսիսային Իրանի տարածքն ընդգրկող վարչամիավորն էր:
 զ/ Արքունի կալվածքների և գանձարանի հսկողության համար պատասխանատու գործակալությունը Մեծ Հայքի թագավորությունում մաղխագությունն էր:
 է/ Բագրատունիների օրոք մշակելի դարձված հողային տարածքները կոչվում էին «ավան»:
 ը/ Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը Աբեմենյան տիրապետության շրջանում հյյուպարքոսն էր:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա/ Արաքսը սկիզբ է առնում Սրմանց լեռներից:
 բ/ Նոր քարի դարը Հայաստանի տարածքում թվագրվում է Ք.ա. X հազարամյակից VI հազարամյակի կեսն ընկած ժամանակաշրջանով:
 գ/ Երվանդ II-ի մասին վերջին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 360-ական թթ.:
 դ/ Արշամը կառուցել է Արշամաշատ քաղաքը Աղձնիքում:
 ե/ 1736 թ. Էրզրումում Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվել է պայմանագիր:
 զ/ 1332 թ. մայիսի 31-ին կնքվել է հայ-եգիպտական հաշտության պայմանագիր:
 է/ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն»-ն ընդգրկում է քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածը:
 ը/ Մանրանկարներով զարդարված՝ մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը վերաբերում է 851 թ.:
 թ/ Ղրիմի պատերազմի արդյունքներն ամփոփվել են 1856 թ. սեպտեմբերին Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրով:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. VIII դ. Արմինիա փոխարքայության կենտրոնը դաձավ Դվինը: 1 մ. (2X0,5 մ.)
 Գրված է՝ _____, պետք է լինի՝ _____:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Հարված «Նոր տեպրակ, որ կոչի յորդորակ» գրքից.

«Թեև ամենքն էլ մեղանշում ու սխալվում են ոչ առանց վնասի ու հատուցման, սակայն ոչ այնպես, ինչպես տերերը, իշխաններն ու ազգի նահապետները, բանն այն է, որ եթե հասարակ ժողովուրդից որևէ մեկը սխալվում կամ մեղանշում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերջություններ է բերում ամբողջ ազգին, ըստ այնմ, թե՛ «Արդար թագավորը աշխարհ է շինում, իսկ անօրեն մարդը՝ կործանում»։ Դա կարելի է տեսնել նաև մեզանում»:

ա. Ո՞ր հասարակարգի պայմաններում իշխաններն ունեն առավել մեծ հզորություն և փաստացի իշխանություն, հետևաբար նրանց կայացրած որոշումները կարող են առավելագույն կերպով ազդել ամբողջ ազգի և պետության վրա:

բ. Վերոբերյալ հատվածից ի՞նչ եզրակացություն կարող եք անել՝ Ձեզ հայտնի պետական կառավարման ո՞ր համակարգն է ամենաարդյունավետը, եթե հետևեք սկզբնաղբյուրի տրամաբանությանը:

գ. Ո՞ր թվականին է հրատարակվել վերոնշյալ գիրքը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Իսթմոսի ճակատամարտը. 0,5 մ.
 ա/ Ք.ա. 171 թ. բ/ Ք.ա. 146 թ.
 գ/ Ք.ա. 275 թ. դ/ Ք.ա. 265 թ.
2. Ո՞վ է հին հունական ողբերգության հիմնադիրը. 0,5 մ.
 ա/ Արիստոֆանես բ/ Հոմերոս
 գ/ Թուկիդիդես դ/ Էսքիլես
3. Ե՞րբ է առաջացել Գերմանական կայսրությունը. 0,5 մ.
 ա/ 817 թ. բ/ 800 թ.
 գ/ 919 թ. դ/ 843 թ.
4. Ե՞րբ է Հունաստանում սկսվել ապստամբություն ընդդեմ Օսմանյան կայսրության. 0,5 մ.
 ա/ 1827 թ. բ/ 1821 թ.
 գ/ 1825 թ. դ/ 1831 թ.
5. Ո՞ւմ գլխավորությամբ են վերագրվում 410 թ. գրավել Հռոմը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
 1. Ռամզես II 2. Համնուրապի 3. Սալմանասար I 4. Յահմոս
 ա. Ք.ա. 1263-1234 թթ. բ. Ք.ա. 1540-1517 թթ. գ. Ք.ա. 1279-1213 թթ. դ. Ք.ա. 1792-1750 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
 ա/ Ք.ա. 597 թ. բաբելոնյան զորքերը գրավել են Հուդայի թագավորության մայրաքաղաք Երուսաղեմը:
 բ/ Ք.ա. 303 թ. Լյու Բանը իրեն հռչակել է կայսր:
 գ/ Սալիական դատաստանագիրքը ներառում էր գոթերի սովորույթները:
 դ/ 1864 թ. ստեղծվել է Միջազգային օլիմպիական կոմիտեն:
 ե/ 1202 թ. խաչակիրները գրավել են Կոստանդնուպոլիսը:
 զ/ Առաջին հումանիստը իտալացի բանաստեղծ Ֆրանչեսկո Պետրարկան էր:
 է/ 1406 թ. Հյուսիսային Հնդկաստանում ստեղծվել է Դելիի սուլթանությունը:
 ը/ 618 թ. Չինաստանում հաստատվել է Տան արքայատոհմը:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

07.02.2022 թ.